

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄՅՃ.
Վեցամս. Կ. Պոլսոյ 4 ՄՅՃ.
Պատուագ 5 ՄՅՃ.
Օտար երկրներու 50 Ֆր.
Մանուցման տուր մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դրշէ. աւելի անգամներու
համար զատ տակարարութիւն կը-
լայ.
Խրաքանչիւր թիւ 2 դրշոց թու զմ.



ԼԵՎԵՐԻ

ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրացող ճանրու-
ծ ախբը Խմբագրութեան վրայ է:
Լրացողս վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն Խմբագիր
—Տնօրէնին պիտի ուղղուի, զալա-
թիւս Սանտքըլար շատուսի թիւ
198, Կօրօ խան, Մասիսի գրասեն-
եակը:
Հանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր:
Չտպուած նամակ, յոյ ուսած, հա-
եա չեն տրուիր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 12 ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքագիտութեան թեկնածոյ
Պօլսոյն ազգայինք ունենալով Պէրլինի
դաշնագրութեան 61 թ. յօդուածին
կարեւորութիւն տալ չեն ուզեր, ա-
ռարկելով թէ իրական արդեւոր մը
չպիտի կրնայ ունենալ մեր ազգին,
կամ որ նոյն է՝ Հայաստանի քրիստոն-
եայ ժողովրդոց համար:

Այս կարծեաց անտեղութիւնն առ-
կէ առաջ քանիցս ցոյց տուած ենք
նոյն իսկ եւրոպական գիտաւոր լրագ-
րաց խորհրդածութեամբ, որք Հա-
յաստանի համար յաջող ազգային մը
հիմունքը կը տեսնեն այն յօդուածին
տրամադրութեանց մէջ, որոց գոր-
ծադրութիւնը մեծ մասամբ Անդղիա
ստանձնած է յունիս Կի անգլո-թուր-
քական պայմանագրութեամբ. բայց
դաշնագիր մեծ տէրութիւնը պիտի
հրդեակցութեան և հսկողութեան ի-
րաւունք վերապահած են իրենց:

Ստորոգէ որ առաջարկեալ բարե-
նորոգմանք դադարաւորական աշխար-
հէն իրականութեան աշխարհը դեռ
չեն անցած, և յայտնի ալ չէ թէ տա-
կաւին որչափ ժամանակ պիտի յա-
յաղի անոնց իրականացումն, բայց
տարակոյս չկայ որ վերջապէս պիտի
գործադրին: Եւրոպական մեծ տէ-
րութիւնք իրենց ստորագրութիւնը
գարելի համար չեն դրած այն հան-
գիստաւոր դաշնագրութեան ներքեւ,
և անշուշտ մեզ պէս տկար ազգ մը
խաբէրու ալ ոչ պէտք մը կրնային ու-
նենալ, ոչ ալ յաջ մը: Սակայն այս ալ
անժխտելի է, որ ինչպէս ամեն ան-
հատ, նոյնպէս և ամեն ազգ բոլորովին
ուրիշներէն պէտք չէ սպասել իւր վեր-
կութիւնն, այլ ինք ալ իւր կարողու-
թեան և պարագայից ներածին չափ
պէտք է աշխատի, և իւր ընդունա-
կութիւնն ու արժանաւորութիւնը նո-
րանոր փորձերով հաստատէ: Եւրո-
պայ մեզ օգնելու տրամադրութիւն
չունենալով, երբոր մեր յոյր մի մի-
այն օտարին օգնութեան վրայ դնեմք,
ծոյլ մտաւորականութիւնն այն չի
չեմք կրնար ունենալ, և նոյն ընդու-
նելութիւնը կը գտնեմք ուրիշներէ:

Ասիէ զատ պէտք չէ մեր ուշադ-
րութեան վերաբերել թէ Օսմանեան
Հայաստան երկու մեծ տէրութեանց
Ռուսիոյ և Անդղիոյ նախանձընդդէմ
աշխարհապարութեան կամ ընդդի-
մամբ շահուց մըցման ասպարէզ
ինքնու կոչուած է, որոյ մէջ Հայք
կարեւոր դեր մը կրնան խաղալ և մե-
ծամեծ օգուտներ քաղել:

Այս կէտը խիստ լաւ պարզած է
Տիլիսի Միջու Հայաստանի լրագիրն
իւր հետեւեալ յօդուածով, զոր ամեն

լրջամիտ ազգայնոց ուշադրութեան
արժանի կը համարենք:

«Պէրլինի դաշնագրութեան որոշեց
Տաճկահայաստանի վիճակն իւր 61 թ.
յօդուածով: Այս յօդուածով Տաճ-
կահայաստանը ընկնում է Եւրոպական
մեծ տէրութեանց հաւաքական խը-
նամակաւորութեան տակ. իսկ Տաճկա-
նի գիտական պայմանագրութեան զօ-
րութեամբ, նա ընկնում է Անդղիա-
կան կառավարութեան և անհատական
խնամակալութեան ներքոյ: Այս ցոյց
է տալիս, որ Տաճկահայաստանի վի-
ճակը հետաքրքրում է մեծ տէրու-
թեանց՝ շօշափելով նոյա շահերն և
առաւելագէս Անդղիոյ շահերն, որոն-
ցից պէտք է ծագին և Տաճկահայերի
շահերը, նոյա ազգայն ապահովու-
թիւնն և բարօրեալ վիճակն ամեն չա-
մից, եթէ միայն նոյա դիտեման օ-
գուտ քաղել այդ դիտութիւնից:
Պարզ է, որ ոչ այնքան Հայերն են հե-
տաքրքրում տէրութեանց, որքան եր-
կիրն իւր աշխարհադրական դրու-
թեամբ:

«Այսպիսի երկրի բնակիչը, որ
ազգ էլ ինի, բնականաբար նշանաւոր
դեր պիտի խաղայ տէրութեանց շա-
հերի համար, սորա կամ նորա շահե-
րին աւելի իւրը յարմարեցնելով: Բա-
րեբաղդաբար Տաճկահայաստանի մէջ
բնակող ազգերից մեծամասնութիւնն
ու աւելի ընդունակ տարրը կազմում
են Հայերն, որ և սորանց տալիս է
բարօրեալ ազգայն յոյս, եթէ դի-
տեման և հասկանան իրանց շահերը
հաշուութեամբ: Որքան իւրաքանչիւր
տէրութիւն իւր շահը պիտի որոնէ Հա-
յաստանի մէջ, նոյնքան էլ պարտա-
կան են Տաճկահայերն իրանց որո-
նել, և ահա սորա համար նոյա ձեռ-
քերը արձակել է Պէրլինի դաշնագ-
րութեան 61 յօդուածն և միջոցներ
տուել:

«Տարակոյս չկայ, որ իւրաքանչիւր
տէրութիւն իրանց կախուած ամեն
միջոցը գործ դնէ իւր շահերը պաշտ-
պանելու համար, առանց Հայի շա-
հին ուշք դարձնելու, այս բնական է,
և ոչ ոքից էլ չէ կարելի պահանջել
որ իւր շահերն ուրիշ շահերին դնէ:
Ոչ մի քաղաքականութիւն այս չի
ներկիւր Անտարակոյս իւր շահերի պաշտ-
պանութեան համար ամեն տէրու-
թիւն, նայելով կարեւորութեան և
հնարաւորութեան, իւր գործակա-
տարները, հիւպատոսներն ու փոխ
հիւպատոսները կունենայ Տաճկահա-
յաստանի զանազան կէտերում: Մը-
ցութիւնը տէրութեանց մէջ անխու-
սափելի է: Սըքայութիւնը բռնաբար-
վում է և բռնուք կը յափշտակեն նո-
րան: Ահա այս յափշտակութիւնը
պէտք է Տաճկահայերը օտարներէ մը-
ցութեան ժամանակ ձեռք բերեն ի-
րանց հայրենիքում, որոյ դիրքը, շու-

րը, հողը, օդը, անցեալն իւր յի-
շատակներով և ապագայն իւր բա-
րօրեալ վիճակով, միշտ աւելի Հայե-
րին ոյժ և զօրութիւն կուտան քան
օտարներին, եթէ միայն Հայ բնակիչ-
ները չընեն արթուն ու լինին:

«Իրաւ է, Տաճկահայաստանի այս
վիճակն աւելի վտանգաւոր է, քան
նորա անցեալ վիճակն, երբ նա մի
բարձի թողի արած, ամենքի ուշադ-
րութիւնից հեռու երկիր էր. բայց
այն վտանգաւոր վիճակն աւելի նա-
խանձելի է նրանով, որ Տաճկահա-
յաստանն անյայտութիւնից դուրս ե-
կաւ և նորան սպասում է նշանաւոր
ապագայ, թէ բարոյապէս և թէ՛ քա-
ղաքականապէս. միայն հարցը նորա-
նումն է, թէ ով պէտք է վայելէ այդ-
ապագայն Տաճկահայաստանի օտա-
րին թէ նորա բնիկ Հայը: Բնականա-
պէս այդ վայելումն մասն և բաժին
պէտք է ընկնի բնիկ Հային — միայն
աշխատութեամբ և խոհմ ուշընդ-
կատ գործունէութեամբ: Տաճկա-
հայի համար վտանգ և նպաստ ա-
ռաւ իւր իւր և իւր և իւր և իւր և իւր
նայ վտանգի առաջն առնուլ և նը-
պաստից օգուտ քաղել: Տաճկահայը
գիտաւորապէս իւր ոյժերի վերայ
պէտք է դնէ պայմանաւ իւր յոյսը,
զարգացնէ նրանց, և նրանց դերա-
դանց անէ ամեն արտաքին օտար ոյ-
ժերից Հայաստանի մէջ, և դրաւէ
համակրութիւնն այն օտարներին, ո-
րանց նպաստը կը կաղըւորէ նորա զօ-
րութիւնը: Նա մի կողմանէ պէտք է
աշխատէ գիտաւորապէս իրան համար,
իւր ապագայի համար, միւս կողմա-
նէ աշխատէ ուրիշների համար այն-
քան, որքան այս աշխատանքը հա-
մապատասխանէ երկուսի շահերի մի-
ութեան, առանց կոյր գործիք վի-
նելու ուժ և իցէ: Օտարների գոր-
ծակիւններն երբեք Հայի շահերը
պաշտպանելու և որոնելու պարտա-
կան չեն, և չեն պաշտպանել, մինչև
չտեսնեն որ Հայը ճանաչում է իւր
օգուտն և սիրում է իւրն աւելի քան
օտարինը:

«Այս դիրքը բռնելու համար Տաճ-
կահայերին հարկաւոր է գործել Հա-
յաստանի մէջ. գիտութեամբ և ար-
հեստով նիւթական ոյժ հարկաւոր է
ձեռք բերել. իսկ իւրեանց դպրոց-
ները և եկեղեցական դասի բարեյա-
կարգութեամբ մտաւոր և բարոյա-
կան ոյժ է Այս երկուսն էլ անհրա-
ժեշտ են, վասն զի ամեն տէրութիւնը
իրանց ազգեցութիւնը հաստատելու
համար Տաճկահայաստանում իրանց
թէ՛նիւթական և թէ՛ բարոյական ոյ-
ժերը գործ պէտք է դնեն, և ահա
սորանց պէտք է դիմադրեն հարկաւոր
դէպքում Հայի նոյն ոյժերը: Անտա-
րակոյս օտար երկրագործներ, օտար
վաճառականներ, օտար ուսուցիչներ,
քարոյիչներ և այլն պէտք է կրկնեն

Հայաստանի մինչև յայժմ կոյս մնա-
ցած հողը և մշակին դայն, որովհետեւ
սա կարօտ է մշակութեան. հարկա-
ւոր է, որ այդ մշակութիւնը Հայերը
օտարին չտան, այլ ամենին առաջը
իրանք կարեն և իրանք վարեն ամեն
վերջիչեալ պաշտօններն իրանց հայ-
րենիքի համար: Տաճկահայերը պէտք
է ցոյց տան, որ սիրում են հայրենի-
քը, ճանաչում են և սիրում իւրեանց
շահերը, մի և նոյն ժամանակ յարգե-
լով և օտարինը:

«Այսպէսով միայն նոյա կարող
են դրաւել Եւրոպայի ուշադրութիւ-
նը ու համակրութիւնը, պատրաստել
իրանց ապագայն համաձայն Պէրլինի
դաշնագրութեան 61 յօդուածին, և
ոչ անտարբերութիւն և օտարների
շահերին: Ով իրանք չի սիրել, նա և
օտարից էլ սէր չէ կարող վայելել և
յարգանք:

«Պալատիկայի ինտելիցենցի նը-
կատմամբ առնուած վերջին յոյս նա-
յելով՝ Գաբաստապի ծերակոյսին նա-
խադահ հոգաւոր Պ. Բէթրօլիչի
ընտրութեան համար մեծամեծ ջան-
քեր կը լինին եղեր, և կը կարծուի
թէ ընտրութեան ամենին աւելի հա-
ւանականութիւն ունեցողներէն մին է:

Այս այն Բէթրօլիչն է, որ Գա-
բաստապի վերջին պատերազմայն մէջ
գործաւոր մը հրամանատար եղած,
և Օսմանեան զօրաց վրայ յաղթու-
թիւններ տարած էր: Առաջին պա-
տերազմէն ետքը Կ. Պօլսոյ գաւառի
հաշտութեան բանակցութիւնները
բաւ. Գրան հետ, բայց իւր ծանր
առաջարկութիւններն յաջողութիւն
չը գտնելով, ձեռնադնայն ետ դար-
ձաւ յայտարարելով թէ՛ բանակցու-
թեամբ ձեռք չբերածը կրնայ դէն-
քով ձեռք բերել: Վեհաժողովոյ
ժամանակ ալ Գաբաստապի կողմէն
պատուիրակ գնացած էր ի Պէրլին:

Բօտկօրիցայի ինտելիցենցի վրայ առ-
նուած վերջին տեղեկութիւնը կը ծա-
նուցանեն թէ Օսմանեան պատուի-
րակները յարդ կատարեալ յաջողու-
թիւն ունեցած են, և թէ մեծ յոյս
կայ որ Գաբաստապի հետ բոլոր գոր-
ծերը պիտի կարգադրին առանց Սե-
պանիայոց կողմէ դէնքով դիմադրու-
թիւն տեսնուելու:

Սլոմանյուլ լրագիրը կը ծանու-
ցանէ թէ Գաղղիացի վիթխայի զըն-
դաւեան, որ Թուրքիա ծնած և Գաղ-
ղիական բանակին մէջ կարեւոր պաշ-
տօններ վարած է, Արևելեան Բու-
մէլիի տառիկանութեան կազմիչ և հը-
րամանատար կարգուեր է:

ինքն: Բաւական չէր իմ այդ մտտանա-
նութեամբ ձեռնելը, դառնում էին և
այնպիսի մարդիկ, որոնք յանդիմանելով
ինձ հակադրողական ձգտումներին հա-
մար, ուղղակի արտաստանատու էին հա-
մարում ինձ այդ հայերի ապագայի մա-
տին: Երբեք անդամ լուծմ էի անէ՛ծք այն
Բայազէթցիներին, որոնք գաղթելով մեր
կողմը, այնտեղ թողել էին իրանց մեր-
ձաւորներին: Աւելի և աւելի յուսահատ-
վում էի այն ժամանակ, երբ մի քանի
Բայազէթցի դադարեցին սուս և շին-
ծու լուրեր տարածելով, հաւատացնում
էին, որ իւր թէ Բայազէթցի հայերը
պաշարված են քրդերից և նրանց ըս-
տովում է ընդհանուր կոտորած, ինչպէս
կարդացի այդ մասին մի նամակագրու-
թիւն ևս Նըւաւից Բուս լրագիրներին
մէկում: Ահա այդպիսի մի անյայտ դը-
րութեան մէջ էի Բայազէթցի հայերի
մասին, երբ վերջապէս հաւատալ տեղե-
կութիւն ստացայ, որ Իբրահիմ և Միր-
զա աղաները պահպանում են քաղաքի
և շրջակայ դիւղերի (Արծաթի և Մուսու-
հայերին «Ջելալի» կոչված քրդերի աս-
տատակութեանց դէմ, և որ ոչ մի ան-
բաղդ արտահանման, բացի մի սպանու-
թեանց, չէ պատահել: Իսկ նոյեմբեր
ամսին Արծաթի դիւղի տանտէտը ներ-
կայանալով ինձ յայտնեց, որ արդէն Օս-
մանեան կառավարիչը երեք հարիւր նի-
զմաններով եկել է Բայազէթ և հրախրում
է հայերին բողոքել իրանց հարստահարող
և թալանող քրդերի դէմ, չնորհակա-
թիւն յայտնեց, որ նրանց դադարակա-
նութեան հետեւանքները հասկացնելով,
արդէն եղանք նրանց գաղթելուն: Նո-
յեմբերի վերջերին ևս այն ամիս սկզբին
նամակներ արտացայ Բայազէթից, որոն-
ցով բաւականութիւն յայտնելով Միւթա-
սարէֆից, հաղորդում են ինձ, որ Ա-
թուհանու զանազան վանահայր Յովհաննէս
վարդապետի աշխատութեամբ դադարե-
կանները սկսել են վերադառնալ և արի-
րանալ իրանց տուն ու տեղին: Յովհան-
նէս վարդապետը մի տեղեկագիր կաղ-
մելով Բաղրեւանդի դաւաթի Հոյոց պա-
հանջներին մասին, ներկայացնել է Միւ-
թասարէֆին և սա ամենատրոյթ և իշ-
ժարութեամբ յանձն է առել կատարել
տեղեկագիր մէջ պարունակած պահանջ-
ները, և արդէն խիստ միջոցներով սկսել
է յետ աղահանջի քրդերից հայերի կո-
ղակումը կայքը: Միտլ բանիւ, Բաղրե-
ւանդի դաւաթի հայերի մնացորդը չափ
բաւական և ուրախ է իր ընդհանրելով:
Յովհաննէս վարդապետի գործունէ-
ութեանը ես բաւականին մօտ ծանօթ-
իւնեմ, բոլորովին համոզված եմ որ նա
իր բարոյական միջոցները գործ կը դնի
իր ցրված հօտը ժողովելու և ապահովե-
լու նրանց նիւթականապէս և բարոյա-
պէս: Արան ենք սրբապան, որ Ալաւ-
կերտի հովտում մի քանի հարիւր ընտա-
նիք զեղծ մնացին դադարեցնութեան
դառն հետեւանքից:

Մ. Տէր-Պետրոսեանց

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

ՇԱՊԻՆ ԳԱՐԱՆՆԻՍԱՐԻ ՆԱՄԱԿԻՆ
ՄԱՅՈՒՆՈՐԻ

(Ծարանակութիւն և վերջ ԳԵՆ 2226)

Ընթերցողը կարծեմ կըցաւ հասկնալ
թէ այն երկու աղաները ինչո՞ւ համար
առանց իր պարտքը կատարելու իրեն յանձ-
նուած հօտին լուրջ ու կաշին քրդերու չափ
խաղող վնասակար անձ մը կը պաշտպա-
նեն: Քիչ մը լուսարաններ Սոյն քաղաքին
մէջ իրարու խիստ հակառակ երկու կու-
սակցութիւնը կային և կան Այս կուսակ-
ցութիւնները առաջնորդին ձեռքը ողի ու
առձայն այն աստիճան զերար կ'առնէին, որ
երբ հոն դատաւորութեան դնացի յիշ-
եալ երկու աղաներէն մին չափցաւ ինձ
ըսելու թէ՛ «մենք քեզ լեւել տուինք, և
անոնց թաղը պիտի չընտան, անոնց
հետ յարաբերութիւն պիտի չունենան»,
մինչև անգամ անոնց եկեղեցիին պիտի
չեղբայրաս ևն»: Երբեք միւթեամբ այս հա-
կաւորացութիւնները մեռուցի, անոնց ինձ
համար արդիւնաւ թաղը նստայ, խտու-
թիւնը վերցաւ, և մինչև անդամ անոնց

վարժարանն կերթայի կը դաստիարակ-
վիս արդիւններու հաճութեամբը:
Սակայն երբ առաջնորդը այս միա-
բանութիւնը տեսաւ, վախցաւ, և ա-
ռանց կարմրելու ոտ հետեւալ խօսքն ը-
սաւ. «աղէկ ըրիւր ասոնք միարանելը,
հաղաւ երեսն իս կամ քեզ միարանու-
թեամբ շուղեն նէ ի՞նչ պիտի ընենք. ես
յատկապէս բաժանեալ ըլլալին կը ցան-
կամ, որ մէկ կողմը իս չ'աղէ նէ, միւսը
անոր հակառակ կողմը» ևն: Առաջնորդն
իր այս աղաղակաւ նպատակին հասաւ,
վասն զի իմ այն տեղէն բաժնուելէս վեր-
ջը նորէն բաժանումը տրեք և մինչ ցարդ
կը յարատեւէ ի կործանումն ժողովրդեան:
Գարահիսարի Հայեր, հերքեք սեպե-
ցէք առաջնորդական աղաղակաւ կու-
ներով տեղին ժամանակինը վատեղը և
այս լուսաւոր դարուս մէջ միջին դարու
մահաբոյր ուղեղն դերի ըլլալով ժողո-
վորդը կոյր աղիտութեան և թշուառու-
թեան մէջ պահելը: Թողէ՛ք այդ մահա-
ցու ճամբան. վարժարանիդ բարեկար-
գեցէ՛ք, վասն զի աղքատ անկէ՛ կ'սպասէ
միայն իր փրկութիւնը, և աղքատ աղա-
ղայն բարեբեցէ՛ք. մի՛ վատահերթ թէ կոյր
միապետական բռնութիւնը գործ կրնայ
տեսնել, նա այլ ևս ջախջախ եղէզի չափ
ոյժ չ'ունի. . . : Եւ դու՛ ի՞նչ պաշտպա-
նութիւն առաջնորդին՝ Հայերիդ լրագրի
մէջ թրթռացող ծաղրել և կաշառեալ
տղայական դրէ՛ք, դաղրէ՛ք, դի մի քանի
տարի առաջ նայն առաջնորդին գէմ դը-
րած բաղմթիւ գրութիւնները թէ լը-
րագրաց, թէ իմ և թէ ուրիշ բարեկա-
մաց քով կենդանի կը մնան, մահաւանդ-
քու այդ անպայման ընթացքով սրբացեալ
պաշտօնդ մի արատաւորեր, որովս դի
չ'աղիտայն դիս ուրիշ բաներ ըսել տալու:
Աղբային վարդապետն ուղղութիւն-
նը յատկապէս այս ծանր կէտին վրայ
հրաւիրելով կը խնդրեմ որ յօդուտ աղ-
դին չուտով վերջ տայ. քանզի չ'որո՞՞
ւած է, և չափ անգամ տեսնուած է որ
որչամի երկարի այսպիսի խնդրի մը, այն-
չափ աւելի խաղաղութիւնը և աստիճան-
նը խոր արմատ կը ձգեն ժողովրդեան մէջ
և ներկայն ու ապագայն աւելի ևս կա-
պականեն: Աղբային վարդապետը ըս-
տովս կը բարեբեցէ՛ք հօտին անտարբեր
մնալով ինչո՞ւ կ'ապահովանայ տեղի կու-
տայ: Խնդրեք բաւական պարզութեամբ և
չափն ալ անցած է. եթէ՛ Արաւհամ և
պիսկոպոսը անմեղ է, թող անմիջապէս
արդարացունէ. իսկ եթէ՛ ոչ, չուտով
պէտք է վերջ տայ. քանզի ժողովրդեան
օգուտը աս կը պահանջէ:
. . . Խմբագիր:

Գուր. որ աղբին ցաւոցը հրապարա-
կական թարգմանն էք, ի՞նչեք աղբու-
թեան, խնդրեմ, սոյն աղբօգուտ դա-
ղալարաւ Ձեր աղբօգուտ թերթին էջե-
րուն վրայ դետեղելով խրկեցէ՛ք Աղբ-
արդարադատ վարդապետը Ձեր խորհրդ-
դածութեամբ հանդերձ, եթէ կամիք:

1878 թ. հոկտ. 30

ՅՕՐՈՒՄԸ

ԽՈՍՐՈՎ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ամերիկայի Թէնէսէ նահանգին
Թօրնհիլ քաղաքին շրջակայքները բը-
նականաւ կըբերանն անուան երկու ա-
մուսինք, երկար տարիներ ի միասին
կենտեղեցելու և ասկէ քանի մ'ա-
միս առաջ կը խորհին թէ մէջէնին
բարուց անհամաձայնութիւն կայ և
այլ ևս չեն կրնար ի միասին ապրիլ:
Ամուսինը տունէն դուրս կելնէ, և
ժամանակ մ'անձամբ կեանք վարե-
լէ յետոյ, նորէն ամուսնոյն քով կը
վերադառնայ:
Տիկին կըբերանն, որ դեռ ամուս-
նոյն հետ հայտնուած չէր, անմիջա-
պէս առաջնուան կուսները նորէն կըս-
կար անոր հետ, և շատ շանցած՝ կը-
ուսիններն հայհոյութեանց կը յա-
ջորդեն: Կուսները բոլոր ողբերգի
մին, ճօն կըբերանն, որ վեցի (չօ-
լաղ) էր, կուսին ձայնը լսելով վրայ
կը հասնի, և մօրը կողմը կը բռնէ:
Հայրը դանակ մը հանելով, որդւոյն

միակ առաջ թիւը քանի մը տեղե-
րէն ծանր կեղծել կը վերադառնայ. ուր-
դան յաւատարմական ճիշդութեամբ և
կը յաջողի հօրը ձեռքէն դանակը
խել և ամբողջապէս անոր սիրտը մը-
խել: Հայրն անմիջապէս կիյնայ կը
մեռնի:
Նոյն միջոցին ճօն կըբերանն միւսեղ-
բայրը՝ Թոմաս կըբերանն տուն կը վե-
րադառնայ, և հօրը կողմը վառուած
դիակին և կուսին ուրիշ նշանները տես-
նելով կը հարցնէ ճօնին թէ կուսին
մէջ հօրը կողմը բռնած էր թէ մօ-
րը: ճօն կը պատասխանէ թէ մօրը
կողմը: Ասոր վրայ Թոմաս, «ուսինն
ես ալ հօրս կողմը կը բռնեմ» ըսե-
լով, դրապանէն ատրճանակ մը կը հա-
նէ և կ'սկսի կրակ ընել եղբորը վը-
րայ, որ ինքզինք ազատուելու համար
սենեակէ սենեակ կը փախչի Թոմասին
ձեռքէն:
Մայրն ալ Թոմասին ետեւէն կիյնա-
լով ատրճանակը ձեռքէն առնու-
կողմէր, և երբ ճօն նոր սենեակ մը
կը մտնէր, մայրը դրանն առջև կը
կանգնէ, որպէս զի Թոմասին ներս
մտնելն և ճօնի ետեւէն կիյնալն արգե-
լու:
Թոմաս վրայ հանելով կը պո-
ռայ մօրը՝ որ մէկը ի քաջուր. մայրը
մտիկ չընէր, այն ժամանակ Թոմաս
ատրճանակը պարպելով մայրը կուրծ-
քէն կը գարնուի կիյնայ: Թոմաս՝ մօ-
րը դիակին վրայէն ցատկելով դարձ-
եալ կը հարած է իւր եղբայրը՝ չարու-
նակ կրակ ընելով, և թէպէտ ամեն
անգամ հարուածը պարապ կելնէր,
բայց մէկ անգամուն զնաւոր իւր եր-
րորդ եղբորը ճօրձ կըբերանն պա-
տահելով սրունքէն կը վերադառնէ, և
ուրիշ գնտակ մ'ալ քրոջը ծուկի վը-
տանդաւոր կերպիւ կը ջախջախէ:
Վերջապէս Թոմասին շատ սպառե-
լով Թոմաս կը վախչի տունէն, ուր
իւր հայրն ու մայրը դիտապատար, և
երկու եղբայրներն ու քրոջը ծանրա-
պէս վերադառնալ կը թողուր:
Իսկ ճօն կըբերանն ինքզինք ոտակա-
նութեան կը յանձնէ, և դատաւ-
տանը տեսնուելով կը վճռուի՝ թէ
օրինաւոր պաշտպանութեան հարկի
մէջ դառնելով պահանջ էր իւր հայ-
րն, հետեւաբար ազատ կարճակուի:

Մօտերս փարիզի մէջ հետեւեալ
զարմանալի գողութեան դէպքը պա-
տահած է:

Գեղացեղ կերպարանքով մարդ-
մը, ուսին վրայ բաւական ծանր բե-
ռով մը շքեղ խանութի մ'առջևէն
անցած ժամանակ իւր թէ ոտքը սա-
հելով, խանութին առջև դուռած
ապակեայ պահարանի մը վրայ կիյ-
նայ և 500 ֆրանքի արժողութեամբ
բան կը կտորէ:

Խանութպանը դուրս վազելով ա-
պուշ գեղացիին օձիքէն կը բռնէ և
ըրած վնասն հատուցանել կը պահան-
ջէ: Մարդը կ'սկսի աղաթափելի եր-
դումներ ընել թէ Յօր Նըւաւիցն
պէս աղքատ էր՝ և ստակ մը չէր կըր-
նար վճարել: Նոյն միջոցին անկից անց-
նող երկու մարդ խորհուրդ կուտան
խանութպանին, որ դեղային խօս-
քին չհաւատայ, և ծոցերը խուղար-
կէ:

Խանութպանը մտիկ ընելով՝ դե-
ղացւոյն վրայէն 1000 ֆրանքից պանք-
տոմս մը կը գտնէ: Գեղացին կուլայ,
և կ'երգուի թէ պանքտոմսն իրենը
չէր, վարպետինն էր: Խանութպանը
մտիկ չընէր, կառնէ 1000 ֆրանքից
պանքտոմսն, և դրոյն վար գնելով
500 ֆրանք ետ կուտայ դեղացւոյն,
որ անմիջապէս կը մեկնի՝ ոտակա-
նութեան դիմելու և պանքտոմսն ետ
առնելու ոսպանակօք:

Արդ՝ պանքտոմսը կեղծ էր, և

երկու անցորդներն ալ՝ զիւղացւոյ կեր-
պարանք մտած գողին ընկերներն է-
ին: Խանութպանն իւր ապակիներն
և ուրիշ նիւթերը կորսնցնելէ զատ
500 ֆրանք ալ վրայ կուտայ:

Ա. Զ. Դ.

Ըստ հրաւերի Թաղական Խորհրդա-
դոյս Թրիսեան Ամենապատիւ Տ. Մը-
կըրտի Սրբազան Արքեպիսկոպոսը
ամսոյս Ապրիլ յառաջիկայ կիւրակէ
օր ի հոգեւոր միախառնութիւն հա-
ւատացեալ թաղիս Ս. Երրորդու-
թեան Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր
Ս. Պատարագ մատուցանելն թաղա-
կան Խորհուրդս ի գիտութիւն կը
ժանուցանէ:

Բերայի Թաղ. Խորհ-
վ. Առնադպրի վ. Առնապետի
Գրեթ Մերձեկեան Գրեթ Մերձեկեան
11 Յունի 1879, Բերա

Ա. Զ. Դ.

Փրիւպէի Հայոց աղջկանց վարժա-
րանին համար վարժուհի մը կըլինող-
լուի՝ Հայերէնի և Հեռագործի հմուտ
Ծանձն առնող պէտք է գլխի
Մերձանը գրաւմանա Պ. Վահրամ
Մարգարեանի գրաւմանը, ամէն օր
կէս օրէն ետքը:

Ի Ա Ն

Նիգամիէ սարսափանէ անպարն-
տա իմալ օրունմադատ օլան միւհիմ
մալը սերահեղ ինչ էլ միւհիմ նիւհա-
սրէյէ լուզում կէօրիւնէն օլուղ ի-
քի քալէմ թիմուր թաղըլըրը նու-
մուհիլըլ վեճհիլ պիւր սէնէտէ հէր
նէ մըդատը լուզում օլուր տա թա-
լէս օլունուր իսէ պիւր լուզումէք
վէ էսմանը սիմ մեճիտիկէ երկիրմի
դըշ հիւսապը ինչ մագաղուղ սէնէտի
թարիլիւնտէն իթիպարէն օլուղ պիւր
կիւնտէ Նիգամիէ խաղինէսի ճանի-
պիւնտէն իթիպ օլունմադ իւզըլէ միւ-
նաքատաւէ վազ օլունմադ չուրու-
թը մուգարէրէ վէ ֆիլիպթը մայիւ-
մէսիլլէ թալիպէրի էօհտէսիւտէ օ-
լուղ քեանուրի սանիլ լուզումինն օն
պէշինճի բաղար իրթէսի կիւնիւ դա-
րարը դալթիլ վերիլէճէ յինտէն, ի-
թասընա թալիպ օլունմադը եէվմի
մէջըլուտէ սաաթ եէտիտէ Տարի
Շուրայի սաքէրլէյէ կէլմէլէրի:
11 քեանուրի սանի 1879

Պապը Սէրապէրի

Նիգամիէ երդաք անպարը իչիւն
թարիլի գարարնտան իթիպարէն
ալթը այ նիւհայէթինէ գատար հէր
նէ մըդատը լուզում օլուր տա թա-
լէս օլունուր իսէ օլ մըդատը թէս-
լիմ իտիլմէք վէ բէսմի կէօրիւք ինչ
թէպիլմինէ գատար քեաֆէի մէսա-
րիֆի միւթէսիւտինէ այիւր օլմագ-
վէ էսմանը վերիլէճէք մագաղուղ սէ-
նէտինն վերաւալլէ մուսմէլէսիլին
թիթամընտա սիմ մեճիտիկէ երկիրմի
դըշ հիւսապիլլէ Նիգամիէ խաղինէսի
տէն վերիլմէք շալթը վէ շէրայթի
սայիլէսիլլէ միւսպիտա օլունմադը
էվլէլմէ իւն գըլընտան թըրլըտ վէ-
թունուրուն իճրա իտիլլէն միւնաքա-
սատընտա պէհէր գըլէսի տօղսան
պէշ բարայա թալիպի էօհտէսիւտէ
գալթը վէ քեանուրի սանիլ լուզում-
նին օն իւչիւնճիւ ճիւմաթ իրթէսի
կիւնիւ թէքրար միւնաքատի ալէիլլէ
սիլին իճրար մուգարէրէ պուլուն-
մուշ օլմաղլէ իթասընա թալիպ օլան-
լարըն եէվմի մէջըլուտէ սաաթ եէ-
տիտէ Տարի Շուրայի սաքէրլէյէ կէլ-
մէլէրի:
9 քեանուրի սանի 1879

Պապը Սէրապէրի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԺՕՁԼՅ ՊԱՍՏՄՈ

Թարգմանեց Կարապետ Կարամանեան

Ազգայնական ճիւղի Գաղութացի միջամտութիւնը վերջին երկու տարիներէն ունեցողը այն է վերջին հասարակ այ իրարմէն ճեպեան եղբարց տարաբանէն ի լոյս ընծայուելով, Պոլսի հասարակ է: Այս գեղեցիկ վէպին մէջ, ուր Լուի Ժեյի կեանքը, վարքն ու վախճանը նկարագրուած են, հետզհետէ կը ներկայանան վերջին և իսկական անցեալ դարուն այն երկու մեծ մարդիկը, թաքուն գիտութիւններ կը յայտնուին, քրան՝ Մասնաց օթեակներն օտարին առջև կը բացուին, վերջապէս ամեն կարգի և հասակի մարդ իւր սիրած նիւթը հոն կը գտնէ, և այլն:

Կը ծախուի Եֆէի ճամբի Զինկիրէրէր ճատտէսի թիւ 2, Ս. Դուկասեան գրատունը և ուրիշ գրատնայաւորքով: Գին 2 ֆր. 25 սանթիմ:

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Յօրինեց Մ. Մամուրեան

Բազմահմուտ Մամուրեան էֆէն տիւնի սոյն 140 երեսէ բաղկացեալ նոր գործը, որ իւր կատարելութեամբը կը յուսանը թէ մասն աշխարհէն աւելոր ազգային վարժարանաց մէջ, իզմիրի ճեպեան տպարանէն հասած ըլլալով, կը ծախուի Եֆէի ճամբի Զինկիրէրէր ճատտէսի թիւ 2, Ս. Դուկասեան գրատունը և ուրիշ գրատնայաւորքով: Գին 1 ֆրանք:

ԹՈՂՂՈՒ ՄԱՐԿԱՆԻ ԱՂԱՅԵԱՆ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՏԱՆ, ԱԶԳԻ ՆԻՆԵՂԱՅՈՒ ԱԶԳԱՅԻՆՈՒԹԱՆ ՄԱՍԻՆ

Ա. պատուականաց պատուական

Տէր Եֆէն Արեւիկայու Անու

Եւ Պատրիարք Օսմանեան Հայոց

Ամեն Երեսն Որդաց Պատրիարքի հրահանու գրուած և Սրբաւան տպարանէն գեղեցիկ տպագրութեամբ ի լոյս ընծայուած 160 երեսէ բաղկացեալ գիրք մ'է, որուն մէջ Պատուարժան հեղինակը հմտութեամբ խօսած է ոչ միայն Հայոց աշխարհի, ազգի և եկեղեցւոյ պատմութեան վերայ, այլ և Հայոց հին ընկերակաշակութեան և վաճառականութեան, նոյնպէս և Հայաստանի բնական գրիչ և Հայոց այժմեան բարձրանալուն վրայ տրամաբանօրէն:

Կը ծախուի Եֆէի ճամբի Զինկիրէրէր ճատտէսի թիւ 2 Ս. Դուկասեան գրատունը և ուրիշ գրատնայաւորքով: Գին մէկ մէծիտ արծաթ:

ԴԱՄԱՐԱՆ

ՁԵՐԱԶ-ՏԵՄԻՃԻՊԱՇԵԱՆ

Ինչպէս անունն արդէն կը յայտնէ, այս մատենին երկու երկուստոր հեղինակներուն գրած դամբանականներուն հաւաքածոյն է, որ կը գրուի թուրք Հայ գրատնայաւորքով: Գին 5 զրդ ուղ թղթաղբամ:

ԲԱՆԱԼԻ

ՀԱՅԵՐԵՆ ԶԱՐԴԻՐՈՒԹԱՆ

Գրեց Մ. Մամուրեան

Ահա ասիկ գեղեցիկ մէթոտ մը, որ Մամուրեան էֆէնտի աշխատասիրութեամբ մասն գտնելով մոյսէն լեզուին ուսման մէջ, կառավարող աշակերտները շարադրել լինելու, չքապակելով որ անոնք քերականութեան տող ոկայի չըջանէն անցնին:

Այս գրքիցը Զմուռնիոյ ճեպեան երկարաց տպարանէն ի լոյս ընծայուելով, կը ծախուի Եֆէի ճամբի Զինկիրէրէր ճատտէսի թիւ 2, Ս. Դուկասեան գրատունը և ուրիշ գրատնայաւորքով: Գին 50 սանթիմ:

ԻՄԲԱՂԻՐ-ՏՆՈՐԷՆ

Ե. Ս. ԻՄԲԱՂԻՐ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԻՐԱՐՈՑ ԱՂԱՏԱՍ ԴՈՐՈ ԽԱՆ



ՇԻՐԱԲԵԹԻԻՍԱՅՐԻԷԻ
ՇՈՂԵՆԱԼՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻՆԻԻ ԺԱՄՆԵՐԸ

1879 ՅՈՒՆՎԱՐ 1 ԵՐԿՈՒՇԱՐԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՁԵՆ ՅՈՒՆՎԱՐ 31

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈՂԵՆԱԼՆԵՐԸ

Table with 2 columns: Ժամ (Date) and Բաժնիքի էջերը (Shares). Rows list dates from 2/15 to 7/20 and corresponding share transactions.

ԿԻՐԱԿԻ ԵՐԵՂ ԴԵՆԵՆՆԵՐԸ

Table with 2 columns: Ժամ (Date) and ԿԻՐԱԿԻ ԵՐԵՂ (Share Transactions). Rows list dates from 3/15 to 6/30 and corresponding share transactions.

Table with 2 columns: Ժամ (Date) and ԿԻՐԱԿԻ ԵՐԵՂ (Share Transactions). Rows list dates from 8 to 12 and corresponding share transactions.

Ամեն ուրախ առաւօտ ժամ 4ին կամուրջէն շողենաւ մ'եւ ներով իսկի Գուգի Պէյը. Չէնկէլ, Վանիք, Գանտ, Ա. Հիսար, Գանը, Բաշապ, հանդիպելով Պէյը պիտոի երկայ, և ժամը 5 1/2ին Պէյը շողէն պիտի երէն և յիշեալ նաւամատուցներն հանդիպելով կամուրջ պիտի վերադառնայ:

ԻՍԿԻՆԻՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՂԵՆԱԼՆԵՐԸ

Table with 4 columns: Ժամ (Date), ԿԻՐԱԿԻ ԵՐԵՂ (Share Transactions), ԿԻՐԱԿԻ ԵՐԵՂ (Share Transactions), Ժամ (Date). Rows list dates from 2/30 to 7/20 and corresponding share transactions.


ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Table with 4 columns: Ժամ (Date), ԿԻՐԱԿԻ ԵՐԵՂ (Share Transactions), ԿԻՐԱԿԻ ԵՐԵՂ (Share Transactions), Ժամ (Date). Rows list dates from 2/30 to 6/35 and corresponding share transactions.



ՋԵՐՄԻ ԴԵՂ

Տօքթոր Այերի Վերմի գեղը աւան և Եյէ տեսակ Վերմի ինչոյն կը բժշկէ: Եւրոպայի մը որ ստոր չափ օգտակար ըլլալ Վերմի: Վերմի բուսողները պարագայ տեղը կը տանջուին քանի որ աս գեղը կայ, պէտք է որ ան միջապէս անկէ գործածեն: Արդէն Պոլսոյ և դաւառներուն մէջ ճանչցուած է աս գեղը ու անով բժշկուողները գիտեն անոր յարգը: Նախ ուրիշ տրամի չափ հեշտ է-դէ խմելու է իւրը և մարդկան գեղ ու ետքը աս Վերմի գեղէն (Վերմի չըռնած) օրը չորս անգամ մէյմէկ անուշի դրդալ Վերմի հետ խառնելով խմելու է, ան միջապէս կանցնի: Տղայոց աւելի քիչ տալու է: Կը ծախուի Ե. Պօլիս Գալաթիա Միմասեան և ընկերաց Ամերիկայի մաղաղան:



ԱՆԿՈՂԱՅԻՆ ԿԱՄ ՄԱՀԱՅԱՅԱԼ

Այնքա և հասարակ քարեօղաներ երկաթէ և տրոյէ, ածան գինեղով կը ծախուի, Կ. Պօլիս Գալաթիա Միմասեան և ընկերաց Ամերիկայի մաղաղան:



ԱՐԴՈՒԿ

Այս ձև իւթիւններուն ամենէն աղէկ տեսակը որուն մէջ կրողը չը մտրի և աղէկ կը գործէ, կը ծախուի Կ. Պօլիս Գալաթիա Միմասեան և ընկերաց Ամերիկայի մաղաղան:

Լրացիր ամեն օր կը հրատարակուի բաց ի կիրակի և տն օրերէ:

Բաժանորդագրութեան տեղն է Գալաթիա Մանդրճըլար ճատտէսի թիւ 193, Երօ խան Մամուրի խմբագրատունը: Իսկ դաւանաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց դրամներն են:

- ՋԵՐՄԻ-ՆԵՐԱ. Ստեփան էֆ. Տեպեան. Եֆէմ Գալաթիա, Թարգմ. Եֆէմեան. ՊՐՈՒՍՅԱ. Ստեփան էֆ. Թանկէրեան. ԲԱՏԱՅԻՍ ԱՐԺ. Տ. Ս. Սեփուական աւագ քահանայ Ֆէպեան. ԱԳՐԵՆԱՆԻՊՈԼԻՍ. ՍԱՄԱՆԷ. ՏԲԱՊԶՈՒՆ. ՍԱՄԱՆԱ. ՍԵՐԱՍՅԱՆ. ՆԵՂՈՒՍ. ԽԱՐԵՐԻ. ԵՐԶԵՅԱՆ. Թող Լու էֆ. Բաղրատունի. ԿԱՐԻՆ. Կարապետ » Զաքարեան. ՄՈՒՇ. Մկրտիչ » Փօթիկեան. ՎԱՆ. ԲԵՐԵԱՆ. Սեղրակ » Խորանեան. ՏԻԳՐԱՆԱԿԻՐՏ. Թարգմ. էֆ. Փալուզեան. ԵՐԵՍԻԱ. ՄԱՐԺ. ՅՈՐԺԱՆ. Ֆէրատ աղա Ս. Ֆէրատեան. ՏՓԻԵՍ. Պ. Նիկողոսյան Տ. Դանդեան. ԿԱԼԿԱՍ. Պետրոս աղա Հիւրան: